ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վարդենիս **24/01/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 21 անդամներ:

Բացակա էին՝ Մելանյա Եփրեմյանը, Ռաֆայել Խչեյանը, Արաքսյա Հայրապետյանը, Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը, Ջեմարա Վարդանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Ձարոյանը

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարմնա մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի և «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, հիմք ընդունելով <<Ա.Գ. ԷՍԹԵՅԹ>> ՍՊԸ-ի շուկայական արժեքի գնահատման N 01172521, N 01172522 և N 01172524 հաշվետվությունները, նկատի ունենալով, որ համայնքին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցները կրճատվել են համայնքի հաշվեկշռից ու պահպանությունը նպատակահարմար չէ, Վարդենիս համայնքի ավագանին **որոշում է.**

1.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 2004 թվականի արտադրության LEXUS GX 470 մակնիշի (589 AS 61), 1998 թվականի արտադրության ԳԱԶ-3110 մակնիշի (257 US 35) և 2010 թվականի արտադրության VAZ 21214-147-20 մակնիշի (301 US 35) մարդատար ավտոմեքենաները օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

Մեկնարկային գները սահմանել համաձայն <<Ա.Գ. ԷՍԹԵՅԹ>> ՍՊԸ-ի շուկայական արժեքի գնահատման N 01172521, N 01172522 և N 01172524 ակտերի՝ համապատասխանաբար LEXUS GX 470-4700000 /չորս միլիոն յոթ հարյուր հազար /, ԳԱԶ-3110-180000 /մեկ հարյուր ութսուն հազար/ և VAZ 21214-147-20 - 850000 /ութ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

2.Համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովին հանձնարարել նախապատրաստել փաստաթղթեր աճուրդ կազմակերպելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ համաձայն՝ ՀՀ Վարչապետի հանձնարարականի՝ պետք է կրճատենք համայնքների հաշվեկշռում հաշվառված մարդատար ավտոմեքենաների քանակը:

Համայնքապետարանին պատկանող մարդատար ավտոմեքենաների կրճատման հետ կապված հրավիրվել է անկախ գնահատող՝ <<Ա.Գ. ԷՍԹԵՅԹ>> ՍՊԸ-ն, որը տվել է իր մասնագիտական եզրակացությունն ու գնահատման ակտը, որի հիման վրա՝

- LEXUS GX 470 ավտոմեքենան գնահատվել է 4 միլիոն 700 հազար ՀՀ դրամ,
- ԳԱԶ-3110-ը՝ 180 հազար ՀՀ դրամ,
- VAZ 21 214-147-20 ավտոմեքենան՝ 850 հազար ՀՀ դրամ:

Իսկ մյուս մեքենայի գնահատման ակտը պատրաստ լինելուն պես՝ կներկայացվի Ձեր քննարկմանը հաջորդ ավագանու նիստին:

<<Ա.Գ. ԷՍԹԵՅԹ>> ՍՊԸ- ի N 01172521, N 01172522 և N 01172524 հաշվետվությունների համաձայն՝ առաջարկում եմ տալ Ձեր թույլտվությունը՝ համայնքին սեփականության իրավունքով պատկանող մարդատար ավտոմեքենաները օտարելու աճուրդ-վաճառքի միջոցով, մեկնարկային գին սահմանելով համաձայն գնահատման ակտի՝

- LEXUS GX 470 ավտոմեքենայի համար՝ 4 միլիոն 700 հազար ՀՀ դրամ,
- ԳԱԶ-3110-ի համար՝ 180 հազար ՀՀ դրամ,
- VAZ 21214-147-20 ավտոմեքենայի համար՝ 850 հազար ՀՀ դրամ:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 9-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ <<2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 183-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 28-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է

1.Վարդենիս համայնքի ավագանու 2024թ. դեկտեմբերի 27-ի ''2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 183-Ա որոշման բովանդակության մեջ կատարել փոփոխություն՝ վերաձևակերպել հետևյալ բովանդակությամբ՝

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի՝ Լ.Ազգալդյան, Երիտասարդության, Հ.Անդրեասյան, Ակունք բնակավայրի Ս . Ավետիսյան և գերեզմանոց տանող ճանապարհի ասֆալտապատում, Շատջրեք բնակավայրի 3-րդ և 7-րդ փողոցների ասֆալտապատում, Մեծ Մասրիկ բնակավայրի 4-րդ փողոցի ասֆալտապատում, Լուսակունք բնակավայրի 1-ին և գերեզմանոց տանող փողոցների ասֆալտապատում, Վանեվան բնակավայրի Գարագաշի փողոցի ասֆալտապատում, Ծովակ բնակավայրի 2-րդ և 5-րդ փողոցների ասֆալտապատում, Վարդենիս քաղաքի Երիտասարդության 2, 3, 6, 11 և 12, Լեռնագործների 1/1 և 1/2, Վ.Համբարձումյան 17 և 19, Արզոյան 2 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ասֆալտապատում:
2. Վարդենիս քաղաքի 10 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում
3. Վարդենիս համայնքի Գեղամասար և Նորաբակ բնակավայրերի ՕԿՋ-ների, ախպրակապերի և կապտաժների կառուցում, Ակունք, Լուսակունք և Ծովակ բնակավայրերի խմելու ջրի ներքին և արտաքին ցանցերի կառուցում, Ազատ բնակավայրի ՕԿՋ-ի և արտաքին ցանցի կառուցում, Փամբակ բնակավայրի կապտաժի և արտաքին ցանցի կառուցում, Լճավան բնակավայրի խմելու ջրի ջրագծի արտաքին ցանցի կառուցում:
4. Վարդենիս համայնքի Գեղամաբակ բնակավայրի խորքային հորի կառուցում, Ակունք բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Կախակն բնակավայրի ոռոգման ներքին ցանցի կառուցում, Ախպրաձոր բնակավայրի ոռոգման արտաքին ցանցի կառուցում, Ծովակ բնակավայրի ոռոգման ներքին ցանցի և սելաֆատարի կառուցում:
5. Վարդենիս համայնքի Կութ, Ջաղացաձոր, Շատջրեք բնակավայրերի գերեզմանոցների ցանկապատում, Ծովակ բնակավայրի գերեզմանոցի աստիճանների կառուցում, Արցախյան պատերազմի զոհերի հիշատակի հուշահամալիրի կառուցում, Վարդենիս քաղաքի Լ. Ազգալդյան, Երիտասարդության և Վ . Մանուկյան խաչմերուկի պուրակի կառուցում, Վարդենիսի Գ.Կարապետյանի անվան զբոսայգու բարեկարգում, Վարդենիսի Սբ. Վարդան ավանդական սրբատեղիի տարածքի բարեկարգում:
6. Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի Մշակույթի տան կառուցում:
7. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի թիվ 1, թիվ 2 և Ակունք բնակավայրի մանկապարտեզների կապիտալ նորոգում:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը՝ նշելով, որ Վարդենիս համայնքի ավագանու 2024թ. դեկտեմբերի 27-ի ''2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 183-Ա որոշման բովանդակության մեջ անհրաժեշտ է կատարել փոփոխություն. վերաձևակերպելով այն հետևյալ բովանդակությամբ՝

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի՝ Լ.Ազգալդյան, Երիտասարդության, Հ.Անդրեասյան, Ակունք բնակավայրի Ս.Ավետիսյան և գերեզմանոց տանող ճանապարհի ասֆալտապատում, Շատջրեք բնակավայրի 3-րդ և 7-րդ փողոցների ասֆալտապատում, Մեծ Մասրիկ բնակավայրի 4-րդ փողոցի ասֆալտապատում, Լուսակունք բնակավայրի 1-ին և գերեզմանոց տանող փողոցների ասֆալտապատում, Վանեվան բնակավայրի Գարագաշի փողոցի ասֆալտապատում, Ծովակ բնակավայրի 2-րդ և 5-րդ փողոցների ասֆալտապատում, Վարդենիս քաղաքի Երիտասարդության 2, 3, 6, 11 և 12, Լեռնագործների 1/1 և 1/2, Վ.Համբարձումյան 17 և 19, Արզոյան 2 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ասֆալտապատում:
2. Վարդենիս քաղաքի 10 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում:
3. Վարդենիս համայնքի Գեղամասար և Նորաբակ բնակավայրերի ՕԿՋ-ների, ախպրակապերի և կապտաժների կառուցում, Ակունք, Լուսակունք և Ծովակ բնակավայրերի խմելու ջրի ներքին և արտաքին ցանցերի կառուցում, Ազատ բնակավայրի ՕԿՋ-ի և արտաքին ցանցի կառուցում, Փամբակ բնակավայրի կապտաժի և արտաքին ցանցի կառուցում, Լճավան բնակավայրի խմելու ջրի ջրագծի արտաքին ցանցի կառուցում:
4. Վարդենիս համայնքի Գեղամաբակ բնակավայրի խորքային հորի կառուցում, Ակունք բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Կախակն բնակավայրի ոռոգման ներքին ցանցի կառուցում, Ախպրաձոր բնակավայրի ոռոգման արտաքին ցանցի կառուցում, Ծովակ բնակավայրի ոռոգման ներքին ցանցի և սելաֆատարի կառուցում:
5. Վարդենիս համայնքի Կութ, Ջաղացաձոր, Շատջրեք բնակավայրերի գերեզմանոցների ցանկապատում, Ծովակ բնակավայրի գերեզմանոցի աստիճանների կառուցում, Արցախյան պատերազմի զոհերի հիշատակի հուշահամալիրի կառուցում, Վարդենիս քաղաքի Լ. Ազգալդյան, Երիտասարդության և Վ.Մանուկյան խաչմերուկի պուրակի կառուցում, Վարդենիսի Գ.Կարապետյանի անվան զբոսայգու բարեկարգում, Վարդենիսի Սբ. Վարդան ավանդական սրբատեղիի տարածքի բարեկարգում:
6. Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի Մշակույթի տան կառուցում:
7. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի թիվ 1, թիվ 2 և Ակունք բնակավայրի մանկապարտեզների կապիտալ նորոգում:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 8-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՊ (ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ)՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ համայնքի տարեկան աշխատանքային պլանը մշակվել է և 2025 թվականին, հիմք ընդունելով սուբվենցիոն ծրագրերի իրականացումը նախատեսվել է իրականացնել նաև՝

• Վարդենիս համայնքի փողոցների կոմունալ սպասարկում և բարեկարգում,

• Վարդենիս քաղաքում փողոցների անվանումները մատնանշող ցուցանակների տեղադրում,

• Վարդենիս համայնքում թափառող շների համար կացարանների ստեղծում,

• Հանրապետության և միջազգային մրցաշարերում մեր մարզիկների մասնակցության ապահովում և այլն:

Համայնքի ղեկավարը առաջարկեց հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 7-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28)-րդ ենթակետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների /ՀՈԱԿ-ներ/ և բյուջետային հիմնարկների հաստիքացուցակները, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածների /կցվում են/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը առաջարկեց հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և բյուջետային հիմնարկների հաստիքացուցակները, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

Քվեարկության արդյունքում 21կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 6-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը, նշելով, որ այս հարցը ևս որպես նախագիծ քննարկվել է նախորդ ավագանու նիստում, և այժմ առաջարկում եմ հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:

Առաջարկություններ և առարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 5-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի աշխատավարձը՝ 2025 թվականի համար սահմանել ամսական 585 000(հինգ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը՝ նշելով, որ նախորդ տարի համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանվել է 585 000(հինգ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ, առաջարկեց վերահաստատել նույն չափով:

Առաջարկություններ և առարկություններ չեղան:

21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 4-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Քննարկել և հաստատել Վարդենիս համայնքի 2025թ. բյուջեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ Վարդենիս համայնքի 2025 թվականի բյուջեի եկամուտները կազմում է 5915830.7 /հինգ միլիարդ ինն հարյուր տասնհինգ միլիոն ութ հարյուր երեսուն հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ, որից վարչական բյուջեի եկամուտները կազմում են՝ 2922511.3 /երկու միլիարդ ինն հարյուր քսաներկու միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար երեք հարյուր դրամ/, ֆոնդային մասի եկամուտները 3850072.8 /երեք միլիարդ ութ հարյուր հիսուն միլիոն յոթանասուներկու հազար ութ հարյուր դրամ/:

2025 թ. բյուջեի ծախսային մասը կազմում է 6596186.5 /վեց միլիարդ հինգ հարյուր իննսունվեց միլիոն հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր դրամ/, որից վարչական բյուջեն կազմում 2922511.3 /երկու միլիարդ ինն հարյուր քսաներկու միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար երեք հարյուր դրամ/, իսկ ֆոնդայինը՝ 4530428.6 /չորս միլիարդ հինգ հարյուր երեսուն միլիոն չորս հարյուր քսանութ հազար վեց հարյուր դրամ/: Տարեսկզբի մնացորդը 680355.8 /վեց հարյուր ութսուն միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար ութ հարյուր / դրամ, որը կուղղվի ֆոնդային բյուջեի դեֆիցիտի ծածկմանը:

Ավելի մանրամասն ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Սեյրան Գրիգորյանը:

Ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը հարց ուղղեց փոփոխություն կա արդյո՞ք հաստատված բյուջեի նախագծի և հիմա ներկայացված բյուջեի մեջ, որին ի պատասխան Կարեն Մկրտչյանը նշեց, որ գուքահարկի մասով 22 միլիոն ավելացել է, քանի որ ավելացել են մեքենաները, անշարժ գուքի կադաստրային արժեքներն են փոխվել և տեղական տուրքերը ևս ավելացել են: Դավիթ Շահնազարյանը իր խոսքում նշեց, որ քաղաքացիների հարկային բեռի ավելանալը համայնքի և ավագանիների

որոշման արդյունքում չի եղել, այլ դա համընդհանուր է և վերաբերվում է ամբողջ հանրապետությանը: Դավիթ Շահնազարյանը նշեց որ անհրաժեշտ է բյուջեի նախագծին կցել բնակավայրերի ելակետային թվերը:

Այլ առաջարկություններ և առարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 3-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝
ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,համար Վարդենիս քաղաքում 30000 դրամ. Ծովակ և Կարճաղբյուր բնակավայրում 30000 դրամ մնացած գյուղական բնակավայրերում 15000 դրամ:

200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝Վարդենիս քաղաքում 30000 դրամ. Ծովակ և Կարճաղբյուր բնակավայրերում 30000 մնացած գյուղական բնակավայրերում 15000 դրամ:

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ Վարդենիս քաղաքում 60000 դրամ.Ծովակ և Կարճաղբյուր բնակավայրերում 60000գյուղական բնակավայրերում 15000 դրամ:

գ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝Վարդենիս քաղաքում 200000 դրամ,Ծովակ և Կարճաղբյուր բնակավայրերում 200000.գյուղական բնակավայրերում 100000 դրամ:,

դ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ,Վարդենիս քաղաքում 400000 դրամ.Ծովակ և Կարճաղբյուր բնակավայրերում 400000գյուղական բնակավայրերում 200000 դրամ:

ե) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ Վարդենիս քաղաքում, Ծովակ և Կարճաղբյուր բնակավայրերում 3 000 000 դրամ.գյուղական բնակավայրերում 1 000 000 դրամ:

զ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների համար՝

- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
է) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ Վարդենիս քաղաքում 10000 դրամ.գյուղական բնակավայրերում 5000 դրամ:
ը) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ Վարդենիս քաղաքում20000 դրամ.գյուղական բնակավայրերում10000 դրամ:

1.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար.

ա)շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների, կառուցվող՝ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տան) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

60000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝Վարդենիս քաղաքում 3000 դրամ.գյուղական բնակավայրերում 1000

դրամ:
բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափերը, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է Վարդենիս քաղաքում 5000 դրամ.գյուղական բնակավայրերում 1500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝տի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում 5000 դրամ.գյուղական բնակավայրերում 2500 դրամ:
բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1Վարդենիս քաղաքում 10000 դրամ.գյուղական բնակավայրերում 3000 դրամ:
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ,Վարդենիս քաղաքում 13000 դրամ.գյուղական բնակավայրերում 4000 դրամ:
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում՝ 20000 դրամ.գյուղական բնակավայրերում՝ 6000 դրամ:
ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ,Վարդենիս քաղաքում՝ 30000 դրամ.գյուղական բնակավայրերում՝ 9000 դրամ:
զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում՝ 100 000 դրամ.գյուղական բնակավայրերում՝ 30000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ

հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում 5000 դրամ.գյուղական բնակավայրերում 2500 դրամ:
բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1Վարդենիս քաղաքում 10000 դրամ.գյուղական բնակավայրերում 3000 դրամ:
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ,Վարդենիս քաղաքում 13000 դրամ.գյուղական բնակավայրերում 4000 դրամ:
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում՝ 20000 դրամ.գյուղական բնակավայրերում՝ 6000 դրամ:
ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, Վարդենիս քաղաքում՝ 30000 դրամ, գյուղական բնակավայրերում՝ 9000 դրամ:

զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում՝ 100 000 դրամ.գյուղական բնակավայրերում՝ 30000 դրամ:

5.Համայնքի
տարածքում՝

ա) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.,
բ) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար 30 000 դրամ,
գ. քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային կենդանիներ պահելու թույլտվության համար 5000 դրամ.
դ. համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար 100 000դրամ.
ե. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար. օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10 000 դրամ

զ. համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ 300 000 դրամ

է. համայնքի տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար

6. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 50 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100,000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 20000 դրամ.

6. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում 5000 դրամ.գյուղական բնակավայրերում 2500 դրամ:

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում 10000 դրամ.գյուղական բնակավայրերում 3000 դրամ:

գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ,Վարդենիս քաղաքում 13000 դրամ.գյուղական բնակավայրերում 4000 դրամ:

դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում՝ 20000 դրամ.գյուղական բնակավայրերում՝ 6000 դրամ:

ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ,Վարդենիս քաղաքում՝ 30000 դրամ.գյուղական բնակավայրերում՝ 9000 դրամ:

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում՝ 100 000 դրամ.գյուղական բնակավայրերում՝ 30000 դրամ:

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում 1000 դրամ.գյուղական բնակավայրերում 500 դրամ:
բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում 2000 դրամ.գյուղական բնակավայրերում 1000 դրամ:
գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ,Վարդենիս քաղաքում 3000 դրամ.գյուղական բնակավայրերում 1500 դրամ:
դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում՝ 4000 դրամ.գյուղական բնակավայրերում՝ 2000 դրամ:
ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ,Վարդենիս քաղաքում՝ 5000 դրամ.գյուղական բնակավայրերում՝ 2500 դրամ:
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ Վարդենիս քաղաքում՝ 10 000 դրամ.գյուղական բնակավայրերում՝ 5000 դրամ:

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար Վարդենիս քաղաքում՝ 20000 դրամ.գյուղական բնակավայրերում՝1000 դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 30 000 դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 150 000 դրամ.
դ) խաղատների կազմակերպման համար՝ 1 000 000 դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 500 000 դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 150 000 դրամ:

8. Համաքաղաքային կանոններին համապատասխան քաղաքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0 դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.
ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:
զ). Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրքը տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:
է). Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

10. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 250000 Հայաստանի Հանրապետության դրամ:
11. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝
ա)3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 Հայաստանի Հանրապետության դրամ.
բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.
գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ

12.Վարդենիսի համայնքապետարանի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության մատուցված ծառայությունների համար փոխհատուցման վճար սահմանել աճուրդների կազմակերպման համար՝ բնակավայրերի համար 5 000 /հինգ հազար/ ՀՀ դրամ, քաղաքի համար 10 000 /տասը հազար/ ՀՀ դրամ, մրցույթների կազմակերպման համար՝ 2 000 /երկու հազար/ ՀՀ դրամ>>:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.3000 դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. ֆիզիկական անձանց համար 20.000 ՀՀ դրամ, իրավաբանական անձանց և հասարակական կառուցապատում իրականացնելու համար 40.000դրամ:

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. ֆիզիկական անձանց համար 20.000 ՀՀ դրամ, իրավաբանական անձանց և հասարակական կառուցապատում իրականացնելու համար 40.000դրամ:

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 2000 ՀՀ դրամ:

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 5000 ՀՀ դրամ:

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 25000 ՀՀ դրամ:

7) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

8) ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

9) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով.

10) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 20000 ՀՀ դրամ:

11) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 300 ՀՀ դրամ:

12) համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար փոխհատուցման վճար. 500 ՀՀ դրամ:

13) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման վճարի չափով.

14) համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 500 ՀՀ դրամ:

15) համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող՝ համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. 1000 ՀՀ դրամ:

16) Վարդենիս համայնքում աղբահանության դրույքաչափ սահմանել՝ յուրաքանչյուր ամիս

ա) Բնակելի նշանակության շենքերում և շինություններում ըստ հասցեի հաշվառում ունեցող բնակչի մեկ շնչի համար 50 ՀՀ դրամ.
բ)Առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով /1քմ-ի համար/ 50 ՀՀ դրամ.
գ)Հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործողություն իրականացնող հասարակական շինությունների 1 քմ-ի համար 20 ՀՀ դրամ.
դ)Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների 1 քմ-ի համար 10 ՀՀ դրամ.
ե)Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների 1քմ-ի համար 10 ՀՀ դրամ: Զ)Շինարարների կողմից արտադրված շինարարական աղբի համար՝ կառուցվող օբյեկտի պայմանագրով սահմանված արժեքի 0,2 տոկոսի չափով:

17.Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար 3000 ՀՀ դրամ

18.Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական, սպորտի և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար 3000 ՀՀ դրամ.
ա)<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Կոմիտաս Կարապետյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի համար 1500 ՀՀ դրամ.

19.Համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների վճարները համաձայն հավելված 1-ի:

20. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ ինչպես արդեն քննարկվել է նախորդ նիստում՝ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերում կատարվել է փոփոխություն և նախատեսվել է նաև շինարարների կողմից արտադրված շինարարական աղբի համար՝ կառուցվող օբյեկտի պայմանագրով սահմանված արժեքի 0,2 տոկոսի չափով վճար: Սահմանված կարգով, բոլոր տեսակների տեղական տուրքերի ու վճարների համար նույնպես սահմանված է դրույքաչափեր:

Ինչպես արդեն նշվել է, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ ըստ անհրաժեշտության, հնարավոր կլինի տարվա ընթացքում դրույքաչափերում կատարել փոփոխություններ:

Նախագծին կից հավելվածի համաձայն՝ համայնքային անասնաբուժական ծառայությունների դիմաց նույնպես սահմանված է վճարներ: Առաջարկեց հաստատել ներկայացված ձևով:

Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը առաջարկելով 4-րդ մասի լ) կետը հանել գլխագրից, քանի որ 10-րդ մասում արդեն նշվում է տվյալ տեղական տուրքի չափը: Նշեց նաև, որ կրկնվում են 13-րդ կետը 16-րդ կետը կրկնվում են, բազառությամբ զ) կետի, հետևաբար առաջակեց հանել 13-րդ կետը և համարակալել:

Ինչպես նաև առաջարկեց համայնքի առխիվից տրամադրվող փաստաթղթերի և հասցեի տրամադրման համար սահմանված գումարի չափը դնել 0 դրամ, որին ի պատասխան Կարեն Մկրտչյանը նշեց, որ կա կառավարության որոշում, որով չի թույլատրվում տեղական տուրքի դրույքաչափը սահմանել 0 դրամ:

Այլ առարկություններ և Առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 2-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել՝ 2025 թվականի հունվարի 24-ին, ժամը 14:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ բաղկացած 8 հարցից.

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՊ (ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ <<2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 183-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
8.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025թ. հունվարի 24-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 21-ը, բացակայում էին <<Քաղաքացիաան պայմանագիր խմբակցության>> ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը և Արտակ Մանուկյանը, հարգելի բացակայում էին Մելանյա Եփրեմյանը, Ռաֆայել Խչեյանը <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ավագանու անդամ

Ջեմարա Վարդանյանը և Արաքսյա Հայրապետյանը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը:

Ելույթով հանդես եկավ Ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը առաջարկելով օրակարգում՝ հաստիքացուցակներից առաջ՝ 3-րդ կետով հաստատել նաև համայքի ղեկավարի աշխատավարձի չափը:

Համայնքի ղեկավարը ընթերցեց օրակարգում ընդգրկված հարցերը՝ ըստ հերթականության, բաղկացած 8 հարցից:

Օրակարգը հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 1-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՋՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կամո Հարությունը _____